զեզերին ի թարգմանութիւնս ընտիր մատենից, ոմանք անձանձիր ճիգամբ վաստակ հոգւով գուն գործեն յօրինել զընտիր և ըզ պատուական մատեանս 'ի պարծանս ազգի և հայրենի Ս. Եկեղեցւոյ. սակայն՝ և ոմանք յորպիսեաց, անկատար ճանաչելով զենքեանս յաւսումն գիտութեան, որպէս և են իսկ, ընդ գրչութեամբ իւրեանց օրինակեցին զյօրինուածսն ի նոցանէ, որով և զանուանս հեղինակացն ծագկեցուցեալ կենդանացուցին զպատուական յիշատակս նոցին։

Այսոքոյ և ես յետինս ուսումնասիրաց, անպիտան գրիչս Թուեալ ճեռ Հոգեւոր Դպրոցի Հաւրնոյ վանից, գտեալ առ ծերունազարդ հայրենասէր Արգիսն Տաշչեանց Ղազարիանաց գեղջ Շիրակայ, զարժանաւոր և զեմնասալից պատասխանին մեծիմաստ Գրիգոր վարժապետի Փեշտմալ ճեան Կոստանդնուպօլսեցւոյ, զոր ըստ խնդրոյ Սիրակոս Կաթողիկոսի Սիլիկիոյ տարաշափեալ ի դէմ բանից զրպարտութեան Լիբանանցի Հայր Վերմոլէի, որ առ Եղբս Հայոց և առ Սիմէոն արքեպիսկոպոսն Բերիոյ, մեծաւ զգուշութեամբ օրինակեալ թէ զգրեալն ի պարսաւագէսն Լիբանանցւոյ, և. թէ զպատասխանին յիշատակեալ Մեծիմաստն Գրիգորի, ամենախոնարհաբար մատուցանեմ զերկոսին իսկ Խմբագրութեան Ձերում, եթէ բարեհաճեցի այնմ, որում անկ է քննասոլ, ընդունել յէջս Էրարոպ ամսագրոյ, զի աշխատութիւն հեղինակին, որ ի վերայ անպատատ կրօնի Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ՝ մի՛ անհետասցի։

Մինաս Վարդապետ Տէր Պետրոսեան։
Ի Հռոմ գիւղ,

Հոկտեմբեր 31 ամսաթուով կը հաղորդին Խմբագրութեանս, որ յիշեալ ամսոյ 16-ին Բագուայ նահանգին Ժշկապետ Դոքթր Յարութիւնեան Թոսաանեանցը վախճանելով 17ին եկեղեցական շքեղ հանդիսիւ ի գերեզման ամփոփուած է մարմինը։

Այսպիսի բարեհամբաւեալ մի պատուական անձի իւր կեանքէն զրկուիլը ոչ միայն Բագուայ Հայոց համար, այլ և մեզ համար ևս պղտարև զգալի և ցաւալի է. ըստ որում այնպիսի մի անձն՝ որ յօգուտ՝ ի լուսաւորութիւն և ի դաստիարակութիւն ազգային մանկանց տեղւոյն իբրև անձնանուէր և ճշմարիտ ազգասէր կրքէք խնայած չէ իւր ջանքերը։ Եւ թէպէտ ըստ կենսականին ժամանակներ ունեցած չէ, բայց ըստ բանեղենին վասն բարեգործութեանց ոչ սակաւ յիշատակներ թողած է, որք կարող են մեզ և Բագուայ Հայոց բաւական սփոփանքներ շնորհել և մխիթարել հոգեպէս։

Կարեւոր վերջաբան-Ընդունելի

Այս առաւօտ առոյգ ազբիւրէ մը լուր առինք թէ, Խառն Ժողովը որոշելէ՝ նախկին պատրիարքական Տեղապահ Տ. Ամիսակէս ազգասէր Արբաղանին ամսական 1000 ղուրուշ տալ կեղծեսական մեռուկէն։

Անսարակոյս ենք թէ, այս որոշման լուրը մեծ ուրախութիւն և գոհունակութիւն կը պատճառէ ինչպէս մեզ, նոյնպէս և բոլոր այն ազգայնոց, որ Նորին սրբազնութեան ազգասիրական ու անձնուիրական նահատակութիւնը տեսնելով՝ երախտագէտ ոգւով կցանկային ազգովին վարձատրութիւն մ՚ընել, մխիթարել զանի իւր ալեզարդ հասակին մէջ և նախանձելի օրինակ մը ընծայել մեր ազգային կղերին։

Շնորհակալ ենք Խառն ժողովին որ թէև ուշ՝ բայց վերջապէս ուշադրութեան առնելով ընդհանուր ազգին այս օրինաւոր

բաղձանքը՝ այս անգամ որոշից պատկել զայն։

Պէ՛տք է վարձատրել անձնուէրն ու երախտաւորը, որպէս զի քաջալերին ուրիշներն ալ և անձնուէրներու ու երախտաւորներու թիւը աւելնայ մեր Ազգին մէջ։

Արիստակէս Սրբազանին համար բաւական վարձատրութիւն է 1000 զուրուշ ամսական, բայց մեծ բան մ՚է ազգին դրամական արդի վիճակին հետ բաղդատմամբ։

Թող պարծի Արիստակէս Սրբազանը և մխիթարուի, որովհետև իւր սիրելի ազգն է, որ այս վարձատրութիւնը կընէ. Թող մխիթարուի և ուրախ ըլլայ Արիստակէս Սրբազանը, որովհետև այս առաջին անգամն է, որ ազգն իւր կեդրոնական մեռուկին այսպէս հանդիսաւոր կերպով ամսական կ՚ոլորշէ իւր մէկ անձնուէր կղերականին համար։ Ազգովին եղած այս վարձատրութիւնը մեծ է — Արիստակէս Սրբազանը՝ այս մեծ կղերականը կզգայ այս վարձատրութեան մեծութիւնը։

Փունջ. Թիւ 446։

Էրզրումէն եկած նամակներէ կը տեղեկանանք որ՝ Աշխ. Ս. Պատրիարքը Էրզրումի մէջ, Բ. Խանայիլ Փաշային հետ հայկերոյթ ըրած առեն՝ Էրզրումի մէջ աղջկանց վարժարանի մը պէտքին խօսքը կը բացուի, սեղանակից ազգայիններէն Մեծ. Փասարմաճեան Խաչատուր Էֆէնտին առանձին վարժարանի մը շինքին ի նպաստ 1500 և Մեծ. Պալլարեան Էֆէնտի 750 ոսկի նուիրել կը խոստանան, որոց կերաշխաւորէ Խանայիլ փաշան։

Այս լուրը որ արժանահաւատ աղբիւրէ մը իմացած ենք՝ թէ մեր Արիստակէս Սրբազանին և թէ վերոյիշեալ ազգայնոց արդէն ունեցած արժանիքը աղ աւելի կը բարձրացնեն։

Հայոց մէջ մեր այսօրուան վիճակին նայելով այն մարդն է մեծը՝ որ աղջկանց վարժարան մը հիմնելու և կառավարելու կը նուիրէ զինքը։

Օրագիր, Թիւ 30։

ՀԱՆԴԷՍ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԳԵՐ. ԽՐԻՄԵԱՆԻ Ի ՊՕԼԻՍ։

Երէկ մինչև Խառն ժողովը Գ. ալաթիոյ խորհրդարանը գումարուած էր, յանկարծ առ Ս. Պատրիարքն հրաւիրակ գացող եռասխմբիներէն մին սենեկէնները մտնելով աւետեց Աշխ. Խրիմեան Սրբազան Պատրիարքի շնորհաբեր գալուստը։

Անմիջապէս հոն գտնուող եպիսկոպոսներէն Գ. Սեթեան և Գ. Եղիազարեան սրբազանները, և պատրիարքական փոխանորդ Ս. Հայրը շոգենաւ գացին, նոյնպէս Տետեսական խորհրդոյ Աստենապետն և ուրիշ մեծարոյ անձինք գացին ի դիմաց Խառն ժողովոյ ծանուցանելու, որ շոգենաւն ուղղակի Գումգափու պիտի երթայ. և Խառն ժողովն ալ անմիջապէս 'ի Պատրիարքարան իջաւ ժամը 7-ին։

Շոգենաւին մէջ Սրբազան Պատրիարքին մեծ պատիւներ տուին. վերոյիշեալ եպիսկոպոսք, Նորին Աշխարհակալութեան քով նստած և արժանապատիւ Գարեգին, Եմրոսիոս և Յովհաննէս վարդապետք վերադարձեան ոտքի վրայ կացնած էին, նոյն միջոցին քանի մ՚անձինք յատուկապէս Նորին Բ. Սրբազնութեան երանաւէտ գալուստը շնորհաւորելով ձեռքն համբուրեցին։

Գ. Սիմեոն եպիսկոպոս, Էրուսաղէմայ փոխանորդ Գ. Խորէն վարդապետ և Երժ. Փիլիպպոս վարդապետ ժամին ու կէսին միջոցները Գումգափուի նաւամատոյցին ալքունական նաւակ մը նստելով շոգենաւը գացին՝ որ քիչ մը հեռուն

Հայոց մէջ մեր այսօրուան վիճակին նայելով այն մարդն է մեծը՝ որ աղջկանց վարժարան մը հիմնելու և կառավարելու կը նուիրէ զինքը։

Օրագիր, Թիւ 30։

ՀԱՆԴԷՍ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԳԵՐ. ԽՐԻՄԵԱՆԻ Ի ՊՕԼԻՍ։

Երէկ մինչև Խառն ժողովը Գ. ալաթիոյ խորհրդարանը գումարուած էր, յանկարծ առ Ս. Պատրիարքն հրաւիրակ գացող եռասխմբիներէն մին սենեկէնները մտնելով աւետեց Աշխ. Խրիմեան Սրբազան Պատրիարքի շնորհաբեր գալուստը։

Անմիջապէս հոն գտնուող եպիսկոպոսներէն Գ. Սեթեան և Գ. Եղիազարեան սրբազանները, և պատրիարքական փոխանորդ Ս. Հայրը շոգենաւ գացին, նոյնպէս Տետեսական խորհրդոյ Աստենապետն և ուրիշ մեծարոյ անձինք գացին ի դիմաց Խառն ժողովոյ ծանուցանելու, որ շոգենաւն ուղղակի Գումգափու պիտի երթայ. և Խառն ժողովն ալ անմիջապէս 'ի Պատրիարքարան իջաւ ժամը 7-ին։

Շոգենաւին մէջ Սրբազան Պատրիարքին մեծ պատիւներ տուին. վերոյիշեալ եպիսկոպոսք, Նորին Աշխարհակալութեան քով նստած և արժանապատիւ Գարեգին, Եմրոսիոս և Յովհաննէս վարդապետք վերադարձեան ոտքի վրայ կացնած էին, նոյն միջոցին քանի մ՚անձինք յատուկապէս Նորին Բ. Սրբազնութեան երանաւէտ գալուստը շնորհաւորելով ձեռքն համբուրեցին։

Գ. Սիմեոն եպիսկոպոս, Էրուսաղէմայ փոխանորդ Գ. Խորէն վարդապետ և Երժ. Փիլիպպոս վարդապետ ժամին ու կէսին միջոցները Գումգափուի նաւամատոյցին ալքունական նաւակ մը նստելով շոգենաւը գացին՝ որ քիչ մը հեռուն